Պրպտարներ բոյոր յարգարարք վրացի՝

Պաչը-Ավիաքիմը ԽՍՀՄ-ի խորհրդ. ուշխա-
տանքի սոց. պաշտպանության հանձնաժողովի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՉԸ-ԱՎԻԱՔԻՄԻ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

355
Պ-24

Հրատ. Պաչը-Ավիաքիմի կենտրոնական յեվ
Լենինգրադյան կոմիտեների

ԼԵՆԻՆԳՐԱԴ 1934 թ.

40 476

Հաստատված և ԽՄՀՄ և ՌՍՖԽՀ Պաշը—Ավիաքիմի կենտրոնական խորհրդի նախագահության նիստում, 1936 թ. նոյեմբերի 19-ին [redacted]

Պատ. խմբագիր Ա. ՄԱԼԽԱՍՅԱՆ

1 MAR 2010

Պրոլետարներ բոլոր յերկրների - միացե՛ք

355
Պ-24

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՇԸ-ԱՎԻԱՔԻՄԻ ՍԿՋԲՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1010
41/99

ՀՍԽՀ Պաշը-Ավիաքիմի կենտրոնական յեվ
Լենինգրադի խորհուրդ

ԼԵՆԻՆԳՐԱԴ 1936 թ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍԽՀ-ՍՍՀ

18 JUL 2013

Լենինգրադի ապարան
Պատվեր № 949
Տիրաժ 6000 որ.
Դլովլիտի լիտոգր 188

1. ՊԱՋԸ-ԱՎԻԱՔԻՄԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Պաջը-Ավիաքիմը Խորհրդային Միության աշխատավորների մասսայական կամավոր կազմակերպությունն է, որն իր առաջ հիմնական խնդիր է դնում հասարակական աջակցություն ցույց տալու ԽՍՀ Միության յերկրի պաշտպանությանը և ավիացիոն ու քիմիական շինարարությանը։

Ընկերությունը պահանջում է իր յուրաքանչյուր անդամից ակտիվ մասնակցել պաշտպանական աշխատանքին, մշտապես բարձրացնել իր ռազմական և քաղաքական գիտելիքներն ու որինակելի աշխատանք կատարել արտադրության մեջ։

Պաջը-Ավիաքիմը, կարմիր բանակի ամենամոտիկ ոգնականը հանդիսանալով և իր շարքերում համախմբելով պաշտպանության ենտուզիաստներին ու հարվածայիններին, իր ուժն մի անդամին դասակարգում և սոցիալիստական հայրենիքի հանդեպ, նվիր-

ված և կարգապահ պաշպան և դարձնում։

Պաչը-Ավիաքիմի անդամները համախմբված են անսասան վճռականությամբ՝ պատրաստ լինել ամեն մի ժամանակ բոլշևիկների կուսակցության և խորհրդային իշխանության ղեկավարությամբ զենքը ձեռքերին պաշտպանելու սոցիալիզմի յերկիրը թշնամական ուժերի ամեն մի վտանգությունից։

Ընկերության, նրա յուրաքանչյուր անդամի և ղեկավարի ամբողջ աշխատանքը պիտի անցնի հասարակական վերահսկողության, բոլշևիկյան ինքնաքննադատության և սոցիալիստական մրցակցության պայմաններում։

2. ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

1. Ընկերության հիմքն են կազմում նրա սկզբնական կազմակերպությունները։ Նրանք ստեղծվում են արտադրական ընկերությունքով՝ գործարաններում, ֆաբրիկաներում, խորհտնտեսություններում, կոլտնտեսություններում, ՄՏԿ-ներում, հիմնարկություններում, բնակվարձկոոպներում, ուսումնական հաստատություններում, տրանսպորտում և ԲԴԿԲ գորամասերում։

Սկզբնական կազմակերպություն ստեղծվում է՝ ընկերության առնվազն 5 անդամ լինելու դեպքում։ Նա հաստատվում է Պաչը-Ավիաքիմի շրջանային խորհրդի կողմից և կրում է իր ձեռնարկության անունը, որինակ՝ Կիրովի անվան գործարանի Պաչը-Ավիաքիմի, «Ցերրորդ Ինտերնացիոնալ» կոլխոզի Պաչը-Ավիաքիմի, 6-րդ միջնակարգ դպրոցի Պաչը-Ավիաքիմի կազմակերպություն։

2. Խոշոր ձեռնարկություններում, հիմնարկություններում, կոլտնտեսություններում և այլն կարելի յե կազմակերպել Պաչը-Ավիաքիմի կազմակերպություններ ցեխերում, մասերում, բաժիններում և այլն, վորոնք մտնում են սկզբնական կազմակերպության կազմի մեջ և յենթարկվում նրա խորհրդին։ Նման դեպքերում ցեխերի և բաժինների ներսում կարելի յե խմբակներ ստեղծել հերթափոխներում, բրիգադներում, տգրեդաղներում և այլն։

Պաչը-Ավիաքիմի դպրոցական սկզբնա-

կան կազմակերպության կից՝ մինչև 15 տարեկան յերեխաների համար ստեղծվում են Պաջը-Ավիաքիմի պատանի բարեկամների խմբակներ, որոնք կազմակերպվում են ռազմական գործի այս կամ այն տեսակը կատարելագույն ուսումնասիրելու հիմունքներով (հրաձգային, ավիամոդելային, պլաներային, ՈՒՊՈ-ի, կապի, ռադիոտեխնիկական, փոստատելեգրաֆային և պաշտոնական գործունեության խմբակներ) Պաջ-Ավիաքիմի պատանի բարեկամների խմբակներն իրենց աշխատանքները տանում են, սերտորեն կապակցելով պատանի պիոներների ջոկատների հետ:

3. ՊԱՋԸ-ԱՎԻԱՔԻՄԻ ԱՆԴԱՄԻ ՄԱՍԻՆ

Պաջը-Ավիաքիմի անդամ կարող է լինել միայն նա, ով գտնվում է մի վարչական սկզբունքով կազմակերպության մեջ, մասնակցում է ընկերության աշխատանքներին և հրապարակորեն մուծում է անդամավճարները:

Պաջ-Ավիաքիմի նոր անդամների ընդունումը կատարվում է սկզբնական կազմակերպության անդամների ընդհանուր ժողովում:

Խոշոր ձեռնարկություններում, խորհ-

ատեսություններում կամ կոլտնտեսություններում անդամների ընդունումը կարող է կատարել ցեխային կամ խմբակային ընդհանուր ժողովը: Վերջին դեպքում պարտադիր է ընդունելության հետագա հաստատումը սկզբնական կազմակերպության կողմից (գործարանի, խորհտնտեսության, կոլտնտեսության):

Ընդհանուր ժողովը ծանոթանում է ամեն մի նոր ընդունվող անդամի հետ և լսում նրա բնութագիրը ու անձնական դիմումը Պաջը-Ավիաքիմի շարքերը մտնելու ցանկության մասին:

Ընկերության շարքերից վտարելու համար պահանջվում է սկզբնական կազմակերպության ընդհանուր ժողովի վորոշումը, և վտարումը պետք է հաստատվի Պաջը-Ավիաքիմի շրջանային խորհրդի կողմից:

Պաջը-Ավիաքիմի կազմակերպությունները պարտավոր են վճռական պայքար մղել ընկերության շարքերը դասակարգայնորեն խորթ և թշնամի տարրերի սողոսկելու դեմ:

Պաջը-Ավիաքիմի պատանի բարեկամն

ջի խմբակներն անդամների ընդունելությունը կատարում են խմբակի ընդհանուր ժողովում պիոների կամ դպրոցականի դիմումի հիման վրա։ Խմբակում ամեն մի աշխատող ստանում է Պաշը-Ավիաքիմի պատանի բարեկամի տոմս։

Պաշը-Ավիաքիմի պատանի բարեկամների խմբակների ընդհանուր ժողովում ընտրվում է մի ավագ, որը տանում է խմբակի աշխատանքը, ղեկավարներ և ջոկում, աշխատանքի հաշվառում և կատարում, կազմակերպում է զրույցներ, եքսկուրսիաներ, կոնկուրսներ և այլն։

5. Պաշը-Ավիաքիմի յուրաքանչյուր նոր, ընդունված անդամ ստանում է իր անդամատոմսն անձամբ սկզբնական կազմակերպության նախագահից։ Սկզբնական կազմակերպությունն իրավունք չունի իրեն մոտ պահել չլրացրած անդամատոմսերի բլանկներ։ Տոմսերն ստացվում են լրացրած վիճակում՝ Պաշի-Ավիաքիմի շրջանային խորհրդից, ընդհանուր ժողովի կողմից ընդունված և արձանագրության մեջ մտցրած նոր անդամների թվի համեմատ։

6. Այն հիմնարկություններում և ձեռնարկություններում, որտեղ Պաշը-Ավիաքիմի իրենց կազմակերպությունը գոյություն չունի, առանձին անդամներն անմիջապես գտնվում են Պաշը-Ավիաքիմի շրջանային խորհրդին կից կամ կցվում են մոտակա սկզբնական կազմակերպության։

Այսպես որինակ՝ կոլտնտեսության սկզբնական կազմակերպության մեջ կարող են մտնել Պաշը-Ավիաքիմի այն անդամները, որոնք աշխատում են գյուղխորհրդում, միլիցիայում, գյուղկոոպերացիայում և այլն։

Միայն Պաշը-Ավիաքիմի անդամներն իրավունք ունեն սովորել բնկերության գործնական կազմակերպություններում (այերոակումբներ, պլաներ ային կայաններ, խմբակներ, հրաձգային ակումբներ, ձգարաններ և այլն), որոնք իրենց աշխատանքը կենսագործում են կամավոր հիմունքներով։ Պաշը-Ավիաքիմի անդամներն ոգտվում են արտոնություններով և զեղչերով, յերբ հաճախում են ընկերության կողմից կազմակերպված և նրա տրամադրության տակ գտնվող մասնայական ավիացիոն, քիմիա-

կան և հրաձգային կոնկուրսները, մրցակցությունները, սոնակատարությունները, ճգարանները, սերոդրոմները, ջրային և պլաներային կայանները, ակումբները, թանգարանները։

4. ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԸ

8. Սովետական կազմակերպությունը հանդիսանում է ընկերության աշխատանքի հիմնական ողակը, անդամների—մասսաների դասակարգիչը և կազմակերպիչը։ Սովետական կազմակերպությունը՝

ա) Կուսակցական կազմակերպության գեկավարությամբ իր անդամներից դասակարգում է հայրենիքի առաջավոր և գիտակից պաշտպաններ, ԼԵՆԻՆԻ—ՍՏԱԼԻՆԻ կուսակցության գործին, սոցիալիզմի կառուցման գործին անսահման՝ անձնվեր մարտիկներ։

բ) Ամեն որ բացատրական աշխատանք է տանում ինչպես ընկերության անդամների, այնպես էլ ձեռնարկության, կոլտնտեսության, խարհանտեսության աշխատողների մեջ—ԽՍՀՄ-ի խաղաղասեր քաղաքականության մասին, միջազգային դրության մասին, իմպերիալիստների կողմից պատերազմ պատրաստելու մասին, յերկրի պաշտպանության խնդիրների մասին, ներգրավելը Պաշը-Ավիաքիմի շարքերն այն աշխատավորներին, վորոնք ցանկանում են ակտիվորեն մասնակցել պաշտպանական աշխատանքին։

գ) Ապահովում է ընկերության անդամների ռազմա-քաղաքական և տեսական մակարդակի բարձրացումը, հատուկ զեկուցումներ ու դասախոսություններ կազմակերպելով՝ ապագա պատերազմի թեորիայի և տակտիկայի, ռազմական տեխնիկայի, քաղաքացիական պատմության հարցերի վերաբերյալ և այլն։

դ) Ապահովում է անդամավճարների ճշտապահ մուծումը ընկերության անդամների կողմից։

ե) Ակտիվ մասնակցում է իր ձեռնարկության նախակոչիկների պատրաստությանը՝ ձեռնարկության կամ ընկերության շրջանային վարժականներում կամ ճամպարում, վորովհետև նախակոչային յերիտասարդության պատրաստությունն ապահովումն սկզբնական կազմակերպության ամենագլխավոր խնդիրներից մեկն է։

ե) Ստեղծվում է ռազմական գործի զանազան մասնագիտությունների ուսումնասիրման խմբակներ և առաջին հերթին հետևյալները՝ 1-ին և 2-րդ աստիճանի Վորոշիլովյան հրաձիգների պատրաստման, պարաշյուտային, պլաներային, ավիամոդելային, նույնպես և թռիչքային խմբակներ (վերջինները սովորում են մոտակա աերոակումբներում), «Պատրաստ ՀՈՔՊ» նորմաները հանձնման խմբակներ, ՀՈՔՊ-ի առանձին մասնագիտությունների խմբակներ, այն է՝ քիմիական, սանիտարական և այլն։ Բոլոր ձեռնարկություններին կից, վորտեղ մեծ թվով Վորոշիլովյան հրաձիգներ կան, կարելի յե հրաձգային ակումբներ ստեղծել։

ը) Կազմակերպում է հեծյալ սպորտ (ձիամարզարան, խմբակներ և այլն) ռազմածովային պատրաստություն ու սպորտ, կարճալքի ռադիոսիրողների խմբակ, պաշտոնային շնաբուծություն, պաշտոնային և սպորտային աղավնաբուծություն։

թ) Այդ խմբակներում ընկերության անդամների կողմից ձեռք բերած գիտելիքները կատարելագործելու և ամրապնդելու նպատակով, սկզբնական կազմակերպությունները, խիստ կամավոր սկզբունքներով, խմբակներն ավարտածներից ստեղծում են մշտական ջոկատներ կամ խմբեր (Վորոշիլովյան հրաձիգների, պլաներիստների, պարաշյուտիստների, քիմիական, սանիտարական և այլն), նույնպես խմբակներն ավարտածներից պատրաստում են հասարակական աշխատող—հրահանգիչների սեփական կադրեր։

ժ) Իր հատուկ ուշադրությունը կենտրոնացնում է խմբակների և մշտական վարժա—շարային ստորաբաժանումների աշխատանքին ներդրավելու ընկերության այն անդամներին, վորոնք միաժամանակ դտնվում են ՀՈՔՊ-ի պահեստում։

ժա) Ստեղծում է ձգարաններ, ռազմական անկյուններ, պարաշյուտային աշտարակներ և պլաներոդրոմներ, ձեռք է բերում անհրաժեշտ գրականություն և նյութական մաս՝ խմբակների և վարժական-ների համար հրացաններ, փամփուշտներ, պլակատներ, թարիխներ, բոլոր տեսակի ղենքերի մակետներ, պարաշյուտներ, պլանեներներ, հակագազեր, հակաիպրիտային հագուստ և այլն։

ժբ) Ստեղծում և խորհրդատվություն ներում և կոլտնտեսություններում Պաշը-Ավիաքիմի անդամներից քիմիական ջոկատներ, պահակային խմբեր և պոստեր՝ սոցիալիստական սեփականությունը պահպանելու համար, կազմակերպում և Պաշը-Ավիաքիմական որինակելի ռազմականացված խոտներ, և «պաշտպանության հեկտարների» ցանումը և նրանց կուլտուրական մշակումը։

ժգ) Ամրապնդում և ընկերության նյութական բազան՝ անդամավճարները ժամանակին գանձելու, վիճակախաղերի ստամբիլն իրացնելու և «պաշտպանության հեկտարները» ցանելու միջոցով։ Կազմակերպում և պրոլետարական հասարակայնության կողմից ոգնություն հասցնելն ընկերության վարժարաններին, համբարներին և աերոակումբներին։

ժդ) Ապահովում և մարտական վարժական զույքի վստահելի պահպանումը, խնամումը և նորոգումը, վորի համար սկզբնական կազմակերպության նախագահն անձնական պատասխանատվություն է կրում։

ժե) Աշխատանք է տանում իր յենթաշեֆ դպրոցի յերեխաների մեջ, ոգնություն հասցնելով Պաշը-Ավիաքիմի պատանի բարեկամների խմբակներ կազմակերպելու գործում, յերեխաների հետ անցկացնելով ռազմականացրած խաղեր, յերթեր, մրցակցություններ, տոնակատարություններ, էքսկուրսիաներ, տրամադրում է իր ձգարանը, աերոակումբը և այն։ յերեխաների համար կազմակերպում պատանի Վորոշիլովյան հրաձգի, պատանի ավիաշինարարի և ՀՈՒՊ-ի նորմաները հանձնելու աշխատանքները։

9. ՀՈՒՊ-ի բնագավառում անգրագիտության վերացումն իր ձեռնարկության, ճիմնարկության, խորհրդատեսության և այլոց աշխատավորների մեջ, ՀՈՒՊ-ի բոլոր պարզարոց աշխատանքի ապահովումը փորձնական պարապմունքների և տգնապների ժամանակ՝ ընկերության սկզբնական կազմակերպության կարեվորագույն պարտավորությունն է։

10. Սկզբնական կազմակերպությունը սիստեմատիկաբար անց է կացնում ասսայական պաշտպանական միջոցառումներ, վորոնք նպատակ ունեն պրոպագանդ մղելու ընկերության աշխատանքների համար և նրա

շարքերն աշխատավորների նոր խավեր ներգրավել։

Նման միջոցառումներ են՝ եքսկուրսիա դեպի ԲԳԿԲ տները, նախկին ճակատամարտերի տեղերը, ճամբարները և այլն. մասսայական ռազմական յերթեր, զրոսանքներ, ամենալավ Պաջը-Ավիոքիմիական հրաձիգների, ֆիզկուլտուրնիկների և առանձին խմբերի մրցակցություններ, ՀՈՒԳ-ի ցուցադրական հավաքներ ու տաղնտաղներ, մասսայական ատենախոսություններ, դասախոսություններ և այլն։

Մրցակցությունները, վորոնք հակայական դ'ր են խաղում պատրաստության վարպետի և կադրերի աճեցման համար մղած պայքարում, հանդիսանում են սկզբնական կազմակերպության աշխատանքի հատկապես կարևոր ձևը։

11. Սկզբնական կազմակերպությունը կանոնավոր կապ է կազմակերպում ու պահպանում կարմիր բանակի այն զորամասի հետ, վորի շեֆն է հանդիսանում տվյալ ձեռնարկությունը, խորհանտեսությունը, հիմնարկությունը։

12. Սկզբնական կազմակերպության ամ

բողջ աշխատանքն ընթանում է կուսակցական կազմակերպության մեջ ամենի ջանք կավարությամբ և Լենինյան կոմունիստական ու արհեստակցական կազմակերպությունների ակտիվ ուժանդակությամբ։

13. Սկզբնական կազմակերպությունն ամեն որ ուշություն է ցույց տալիս սոցիալիստական շինարարությանը, ներգրավելով իր անդամներին արտադրության հարվածայինների շարքերը և խրախուսելով պարգևներով ու Պաջը-Ավիաքիմի կրծքանշաններով պաշտպանության միայն այն հարվածայիններին, վորոնք միաժամանակ արտադրության հարվածայիններ են։

14. Սկզբնական կազմակերպության ղեկավարությունը կենսագործվում է Պաջը-Ավիաքիմի շրջանային խորհրդի կողմից։

10/10
41/99

5. ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

15. Պաջը-Ավիաքիմի սկզբնական կազմակերպությունները կառուցված են և աշխատում են պրոլետարական հատարական դեմոկրատիայի հիմունքներով։

Կազմակերպության աշխատանքների բո-

ՀԱՅԿՈՍՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍԽՀ-ՈՍՖ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ

յար ամենակարևոր հարցերը, նրա գործունեության պլանները և կազմակերպության մեջ նոր անդամների ընդունելությունը վարում է ընդհանուր ժողովը, ձայների հասարակ մեծամասնությամբ։

Կազմակերպության ընդհանուր ժողովները գումարվում են առնվազն տարին մեկ անգամ։ Ժողովն իրավազոր է համարվում, յեթե ներկա յե կազմակերպության անդամների կեսը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Խոշոր սկզբնական կազմակերպություններում ընդհանուր ժողովների փոխարեն պատգամավորների կոնֆերենցիա յե հրավիրվում 25 անդամից 1 պատգամավոր։ Կոնֆերենցիան իրավազոր է համարվում, յեթե ներկա յե առնվազն պատգամավորների 2/3-ը։

16. Ընկերության անդամների ընդհանուր ժողովը սկզբնական կազմակերպության բարձրագույն որգանն է։ Նա իրավունք ունի խորհրդի կազմը փոփոխել, յետ կանչել խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի ամեն մի անդամի կամ նախագահի։ Ընդհանուր

ժողովի առաջ հաշվետու է կանգնում են տալիս իրենց աշխատանքների մասին՝ խորհրդի բոլոր անդամները և պաշտպանական առանձին մասերի ղեկավարները (ատրաբաժանումների հրամանատարները, խմբակների ղեկավարները, վարժակայանի պետը և այլն)։ Ընդհանուր ժողովը վարում է նաև անդամների ընդունման և հեռացման հարցը։

Միաժամանակ ընդհանուր ժողովն ընկերության անդամների մեջ տարվելիք մասսայական աշխատանքի և նրանց գաղափարական-քաղաքական ու ռազմատեսական մակարդակի բարձրացման հիմնական ձևերից մեկն է։

17. Պաշտ-Ավիաֆիմի-անդամների ընդհանուր ժողովը գումարվում է ինքնուրույն կերպով, տվյալ ձեռնարկության, կոլտնտեսության, հիմնարկության և այլոց մյուս ժողովներից առանձին։ Պաշտ-Ավիաֆիմի անդամների ընդհանուր ժողովում վճռական ձայնի իրավունքը պատկանում է միայն ընկերության անդամներին։

Բոլշևիկյան ինքնաքննադատությունը, չնայած անձնավորությունների, կազմակերպության աշխատանքների բոլոր բա-

ցերի անողոք մերկացումն ընկերության ամեն մի անդամի ամենաառաջին պարտականությունն է, որը կենսագործվում է առաջին հերթին ընդհանուր ժողովներում։

6. ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

18. Կազմակերպության աշխատանքը ղեկավարելու համար ընդհանուր ժողովն ընտրում է խորհուրդ և խորհրդի նախագահ։ Այն կազմակերպություններում, որտեղ անդամների թիվը 15-ից պակաս է, խորհրդի փոխարեն ընտրվում է կազմակերպության նախագահ։ 15-ից մինչև 100 անդամ ունեցող կազմակերպությունների խորհուրդը բաղկացած է լինում 3-5 մարդուց, 100-200 անդամ ունեցող կազմակերպություններում 5-7 մարդուց, 200-ից ավելի անդամ լինելու դեպքում խորհրդում ընտրվում են 7-9 մարդ։

Սկզբնական կազմակերպության խորհուրդն ընտրվում է 1 տարի ժամանակով, Պաչը-Ավիաքիմի այն ամենաակտիվ, լավագույն անդամներից, որոնք իրենց ցուցաբերել են պաշտպանական գործնական աշխատանքի ընթացքում։ Խորհրդի առանձին անդամները և նրա նախագահը, անաշխատունակության դեպքում, կարող են վերընտրվել նաև ժամկետից առաջ։

19. Խորհուրդը պատասխանատու է սկզբնական կազմակերպության ամբողջ աշխատանքների համար, նրա կողմից իր կարեվորագույն խնդիրների կատարման համար այս կանոնադրության 8-րդ կետում նախատեսված բոլոր խմբակների և գործնական հիմնարկությունների (վարժական, ռազմական անկյուններ, ձգարաններ, ոլորտային կայաններ և այլն) կազմակերպության և նրանց աշխատանքի վորակի համար։

20. Խորհուրդն իր աշխատանքի տարեկան և յեռամսակային պլանները և նախահաշիվները ներկայացնում է Պաչը-Ավիաքիմի անդամների ընդհանուր ժողովին կամ կոնֆերանսին ի հաստատություն հետագայում իր ողջ գործունեությունը կենսագործելով այդ պլաններին ու նախահաշիվներին խիստ համապատասխան։

21. Սկզբնական կազմակերպության խորհրդի կարեվորագույն խնդիրն է՝ հոգ

տանել Պաջը-Ավիաքիմի ակտիվի ամրացման, պաշտպանական աշխատանքի ստորին կազմակերպիչների մշտական կադրերի պատրաստման և ամրապնդման։ Խորհուրդն անց և կացնում հետևյալ կազմակերպչական միջոցառումները, որոնք ապահովում են սկզբնական կազմակերպության ճիշտ և պարզորոշ աշխատանքը։

ա) Սիստեմատիկաբար հրահանգում է ցեխերի և խմբակների կազմակերպիչներին, կարգավորում է նրանց միջև փորձերի փոխանակումը և կազմակերպում է խմբակների ու առանձին անդամների սոցիալիստական մրցակցությունը պաշտպանական աշխատանքի առանձին տեսակների վերաբերմամբ։

բ) Սեմինարներ և կազմակերպում՝ խմբակների կազմակերպիչներ, ցեխային նախագահներ, խմբակների ղեկավարներ և այլն պատրաստելու համար։

գ) Կազմակերպության անդամների ճիշտ հաշվառում է կատարում սահմանված ձևերով, կազմակերպելով անդամատոմսեմատյանը և հաշվառման նյութերի պահումը։

դ) Ապահովում է սկզբնական կազմակերպության ամբողջ գույքի, մանավանդ զենքի խիստ հաշվառումը և պահումը։

ե) Վարում է կազմակերպության ֆինանսական հաշվեմատյանը, հետևում է անդամավճարների ժամանակին ստացմանը, իրացնում է վիճակախաղերի տոմսերը, կազմակերպում է տոմսերի ստուգումն աղյուսակով և շահումների վճարումը։

23. Խորհուրդն իր աշխատանքի մասին հաշվետու է Պաջը-Ավիաքիմի շրջանային խորհրդի և իր սկզբնական կազմակերպությունների անդամների ընդհանուր ժողովի կամ կոնֆերանսի առաջ (առնվազն 3 ամիսը մեկ անգամ)։

7. ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ

24. Սկզբնական կազմակերպության նախագահն ընտրվում է ընդհանուր ժողովում, հաստատվում է շրջանային խորհրդի կողմից և յենթարկվում վերջինիս։

25. Սկզբնական կազմակերպության նախագահն առաջին հերթին պատասխանատվություն է կրում կազմակերպության և նրա խորհրդի աշխատանքի համար։ Նախա-

գան ապահովում և ընդհանուր ժողովների վորոշումների կատարումը, բաշխում և աշխատանքը խորհրդի անդամների, ցեխերի և խմբակների կազմակերպիչների և առանձին ակտիվիստների միջև, նրանց կոնկրետ խնդիրներ և տալիս և ստուգում դրանց կատարումը։ Սկզբնական կազմակերպության մեծամասն այն նախագահը հաջողությամբ կկատարի իր պարտականությունները, վորը կկարողանա աշխատել, հենվելով հասարակայնության վրա և իր շուրջը պաշտպանական ամուր ակտիվ ստեղծելով։

26. Սկզբնական/ կազմակերպության նախագահի վրա, նրա անձնական պատասխանատվությամբ դրվում է. գենքի պահելն ու խնամելը, անդամների հաշվառումը և տնտեսական գործունեության այնպիսի դրվածքը, վորը կվերացնի վատնումներն ու հափշտակումները։

8. ՊԱՋԸ-ԱՎԻԱՔԻՄԻ ՑԵԽԵՐԻ ՅԵՎ ԽՄԲԱԿՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԸ

27. Ցեխերի և խմբակների կազմակերպիչներն ընտրվում են իրենց ցեխերի և խմբակների ընկերության անդամների ընդհանուր ժողովներում։

28. Ցեխերի և խմբակների կազմակերպիչները, աշխատելով իրենց սկզբնական կազմակերպության խորհրդի և նրա նախագահի ղեկավարությամբ, պատասխանատու են իրենց ցեխերում և խմբակներում բոլոր ձեռնարկումներն ու պլանները անցկացնելու համար։ Նրանք կազմակերպում են իրենց ցեխերի խմբակների անդամների մեջ մասսայական ռազմական աշխատանքը, նրանց ներգրավելով խմբակների, դպրոցների և ակումբների մեջ, կազմակերպում են պաշտպանական հարվածային բրիգադներ և այլն։

Ցեխերի և խմբակների կազմակերպիչները պատասխանատու են անդամավճարների ժամանակին գանձման համար և կազմակերպում են Պաջը-Ավիաքիմի վիճակախաղերի տոմսերի բաշխումը։

29. Ցեխերի խմբակների կազմակերպիչները հաշվետու են իրենց ընտրող ընկերության անդամների առաջ առնվազն յեռամսյակը մեկ անգամ։ Խմբակների ընդհանուր ժողովները գումարվում են առնվազն ամիսը մեկ անգամ։

30. Խաշոր ցեխերում, վարեղ 200 իգ ավելի Պաշը-Ավիաքիմի անդամ կա, բնաբվում են ցեխային խորհուրդներ 3—5 մարդու կազմով։

9. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

31. Սկզբնական կազմակերպության վողջ աշխատանքը կենսագործվում է՝ Պաշը-Ավիաքիմի անդամների ընդհանուր ժողովի և շրջանային խորհրդի կողմից հաստատված տարեկան նախահաշվին խիստ համապատասխան։ Նախահաշիվը կազմվում է շրջանային խորհրդի կողմից սահմանված ժամկետներին։

Նախահաշվի մուտքի մասը կազմվում է հետևյալ հոդվածներից.

ա) Անդամավճարներից սահմանված հատկացումներ.

բ) Վիճակախաղերի իրացումից սահմանված հատկացումներ.

գ) Արհմիությունների հատկացումներ ֆաբրիկաարկումների բյուջեներից.

դ) «Պաշտպանության հեկտարներից» ստացված մուտքեր.

ե) Մուտքեր Վորոշիլովյան հրաձիգներ,

պարաշյուտիստներ, պլաներիստներ և այլն պատրաստելու պայմանագրերի համաձայն։

զ) Մուտքեր մասսայական աշխատանքի միջոցառումներից (ներկայացումներ, կինո, ռազմականացրած տեսարաններ, մասսայական տոնական տարեթվեր)։

Նախահաշվի ելքի մասը կազմվում և աշխատանքի պլանին ճիշտ համապատասխան, մոտավորապես հետևյալ հոդվածներից.

ա) Խմբակների ցանաց պահելու համար (հրաձգային, ՀՈՊՊ-ի, պլաներային, պարաշյուտային և այլն)։

բ) Գործնական հիմնարկությունները պահելու և կահավորելու համար (ձգարաններ, ռազմական անկյուններ, անդարաններ, պարաշյուտային աշտարակներ և այլն),

գ) Ամեն տեսակի սեմինարներ անցկացնելու համար.

դ) Ռազմական վարժանքներ և համբարներ պահելու համար.

ե) Վարժա-շարային ստորաբաժանումների, Վորոշիլովյան հրաձիգների խմբերի, քիմիական ջոկատների, պարաշյուտիստների խմբերի և այլոց աշխատանքի կազմակերպման համար։

ղ) Մասսայական աշխատանքի կազմակերպման համար (եքսկուրսիաների, մրցակցությունների, յերթերի, պարապմունքների, զեկուցումների, դասախոսությունների կազմակերպման և այլն)։

ը) ՀՈՒՊ-ի անդրագիտության վերացման, վարժական հակադարձեռք բերելու համար և այլն։

թ) Իր յենթաշեֆ դպրոցի յերեխաների հետ մասսայական աշխատանք անցկացնելու համար։

Սկզբնական կազմակերպության նախահաշվի յելքի բոլոր հոդվածներն ունեն իրենց խիստ նպատակային հատկացումը։

32. Դրամական գումարների հաշվառումը և նախահաշիվների կազմումը կատարում է սկզբնական կազմակերպության գանձապահը, որն ընտրվում է կազմակերպության նորընտիր խորհրդի առաջին նիստում խորհրդի կամ կազմակերպության անդամներից (15-ից պակաս անդամ ունեցող կազմակերպություններում գանձապահը նախագահի հետ միասին ընտրվում է ընդհանուր ժողովում)։

33. Այն բոլոր գումարները, որ ստանում է սկզբնական կազմակերպությունը նախահաշվով նախատեսված մուտքերից դուրս, ամբողջովին մտնում է կազմակերպության տրամադրության տակ։

34. Նախահաշվով նախատեսված յելքերից դուրս ծախքերը կատարվում են միայն Պաջը-Ավիաքիմի շրջանային խորհրդի թույլտվությամբ։

35. Սկզբնական կազմակերպությունը պարտավոր է իր բոլոր միջոցները պահել ընթացիկ հաշիվներում պետբանկի բաժանմունքներում կամ խնայդրամարկղներում։

10. ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

36. Բոլոր սկզբնական կազմակերպություններն ընտրում են վերստուգիչ հանձնաժողովներ, որոնք իրենց գործունեության ընթացքում հաշվետու են կազմակերպության ընդհանուր ժողովի առաջ։ Վերստուգիչ հանձնաժողովը և նրա նախագահը ընտրվում են 1 տարի ժամանակով, յերեք մարդու կազմով։

15-ից պակաս անդամ ունեցող կազմակերպություններում ընտրվում է շրջանային վերստուգիչ հանձնաժողովի լիազոր։

37. Վերստուգիչ հանձնաժողովը.

ա) ՎԵՐԻՍՏՈՒԳՈՒՄ և սկզբնական կազմակերպության խորհրդի ֆինանսական, տնտեսական և մատակարարման վողջ գործունեությունը, առաջին հերթին ստուգելով նախահաշվի ճիշտ կատարումը, դրամական գործողությունների ճշտությունը, ֆինանսական և տնտեսական կարգապահության պահպանումը, միջոցների նպատակահարմար և խնայողաբար ծախսումը, հաշվառման և հաշվետվության կազմակերպումը, դրամական միջոցների և նյութական արժեքների կանոնավոր պահելը, անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելով վատնումների և հափշտակումների առաջն առնելու համար։

բ) Կանոնավոր կերպով ստուգում է յեկամուտի մուտքերը (անդամավճարներ, պաշտպանության հեկտար, վիճակախաղեր և այլն)։

գ) Ստուգում է նոր գործնական կապմակերպությունների բացման նպատակահարմարությունը՝ նրանց նյութական—ֆինանսական ապահովման տեսակետից։

դ) Սիստեմատիկաբար ստուգում է ընկերության անդամների հաշվառման դրվածքի կանոնավորությունը։

ե) Վերստուգիչ հանձնաժողովի անդամները նստում են խորհրդի բոլոր նիստերին խորհրդակցական ձայնով։

38. Վերստուգիչ հանձնաժողովներն իրավունք ունեն.

ա) Ծանոթանալ բոլոր նյութերին, վորոնք բնորոշում են սկզբնական կազմակերպության ֆինանսական—տնտեսական աշխատանքը։

բ) Խորհուրդներին՝ կատարման համար պարտադիր ցուցումներ տալ՝ կազմակերպության ֆինանսական—տնտեսական գործունեության բացերն ուղղելու վերաբերյալ։

գ) Քրեական հետապնդումներ հարուցել քրեական հանցագործություն կատարող անձանց դեմ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Պաչը-Ավիաքիմի վերստուգիչ հանձնաժողովների և խորհուրդների միջև տարաձայնությունները լուծվում են շրջանային խորհուրդը և շրջանային վերստուգիչ հանձնաժողովը միասին։

39. Վերստուգիչ հանձնաժողովները ներդրավում են իրենց աշխատանքի մեջ լավագույն ակտիվիստ Պաչը-Ավիականներին և կոմյերիտմիության «Թեթև հեծելազորը»։

ՀԱՅԿՈՍՏԻՆ ՊՐՈՖՍՈՒՆԻՈՆ
ՀՍԽՀ-ՍՍՀ

«Ազգային գրադարան»
NL0219642

01

ԳԻՆՆ Է 25 ԿՈՊ.

40.476